ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

« 12 » 10 2017 թ. N 24.24/22.9/10499-17

Ձեր 22.08.2017թ.
թիվ Ե- 2507

«Ա. Դ. ՍԱԽԱՐՈՎԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Լ. ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ներսիսյան

ՀՀ կառավարության աշխատակազմից 20.09.2017թ. թիվ 02/14.10/20743-17 գրությամբ ստացված գրության կապակցությամբ հայտնում եմ, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ 2013 թվականի հունվարի 1-ից հետո Հայաստանի Հանրապետությունում գործատուների հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու (վարձու աշխատանք կատարելու), ժամանակահատվածը հաշվառվում է աշխատանքային ստաժում, եթե ըստ օրենքով սահմանված տեղեկատվական շտեմարան ներառված տվյալների՝

1) անձը ստացել է աշխատավարձ (եկամուտ).

2) անձը վճարել է եկամտային հարկ:

ՀՀ կառավարության 2011 թ. մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշմամբ հաստատված «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կենսաթոշակ նշանակելու համար դիմելու, կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակը փոխելու, կենսաթոշակ վճարելու և կենսաթոշակի գործ (փաստաթղթեր) վարելու կարգի» 14.1-ին և 14.4-րդ կետերի համաձայն՝ եթե անձն աշխատանքային հարաբերությունների մեջ է գտնվել համապատասխան մարմնի հետ և ապահովագիրների հաշվառման գրանցամատյաններում և էլեկտրոնային տվյալների

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ. (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
http://www.mlsa.am info@mlsa.am

բազաներում բացակայում է անհրաժեշտ տեղեկատվությունը, ապա համապատասխան մարմնում աշխատելու (վարձու աշխատանք կատարելու) ժամանակահատվածում եկամտային հարկ վճարած լինելը կամ աշխատավարձ ստանալը ճշտվում է համապատասխան մարմնի տված տեղեկանքի հիման վրա: Ընդ որում, տեղեկանքում նշվում են տեղեկանքը տալու օրը, ամիսը, տարեթիվը, հիմքերը (հրամաններ, անձնական հաշվառման գրքեր (քարտեր) և այլ փաստաթղթեր), անձի ազգանունը, անունը, հայրանունը (անձը հաստատող փաստաթղթում նշված լինելու դեպքում), պաշտոնը (միայն սույն կարգի 14.1-ին կետում նշված դեպքում), վարձու աշխատանք կատարելու կամ ծառայության մեջ գտնվելու ժամանակահատվածի սկիզբը (օրը, ամիսը, տարեթիվը) և վերջը (օրը, ամիսը, տարեթիվը), տեղեկանքը տվող համապատասխան մարմնի անվանումը և պաշտոնատար անձի անունը, ազգանունը, ստորագրությունը: Տեղեկանքը կնքվում է համապատասխան մարմնի կնիքով:

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2.1-ին մասի, ինչպես նաև ՀՀ կառավարության 13.11.2013թ. թիվ 1314-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի համաձայն՝ հարկային գործակալները գրանցման հայտեր չեն ներկայացնում այն անձանց համար, որոնց վերաբերող՝ գրանցման հայտում ներառվելիք տեղեկատվությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն, իսկ եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկում այդ անձանց եկամուտների և դրանցից պահված եկամտային հարկի գումարներն արտացոլում են հաշվարկի համապատասխան տողում՝ հանրագումարային տեսքով:

1995թ. մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին» պայմանագրի 22-րդ հոդվածի վերջին պարբերության համաձայն՝ ՀՀ քաղաքացի հանդիսացող քաղաքացիական անձնակազմի անձանց աշխատանքի վարձատրության բոլոր տեսակներից հարկերի գանձումը կատարում է ռուսաստանյան ռազմակայանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ու չափերով:

Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվության՝ Խ. Կիրակոսյանը աշխատել է ՌԴ N 63530 զորամասին (ՀՎՀՀ՝ 02258011) կից թիվ 21 միջնակարգ հանրակրթական դպրոցում: Հարկային գործակալը աշխատողների համար գրանցման հայտեր չի ներկայացրել, իսկ եկամտային

հարկի ամսական ամփոփ հաշվարկում պահված եկամտային հարկի գումարներն արտացոլել է հանրագումարով (ոչ անձնավորված): Մինչև 2017թ. հուլիս ամիսն (ներառյալ) ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար հաշվարկված եկամտային հարկի գումարներն ամբողջությամբ վճարված են:

Պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տեղեկատվության համաձայն՝ Խ. Կիրակոսյանի կենսաթոշակի գործում առկա է գործատուի տված տեղեկանքը 01.06.2016-01.06.2017թթ. ժամանակահատվածում եկամտային հարկ վճարած լինելու և աշխատավարձ ստանալու մասին՝ ըստ ամիսների:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ սոցիալական ապահովության պետական ծառայությանը հանձնարարվել է 01.01.2017-01.06.2017թթ. ժամանակահատվածը հաշվառել Խաչատուր Կիրակոսյանի աշխատանքային ստաժում և կենսաթոշակը վերահաշվարկել դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատ.՝ կենսաթոշակային ապահովության վարչություն
010 54 27 96